ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 27-ին ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հանրապետության գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը։ Իր բացման խոսքում ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը նշեց, որ անցած տարի Հանրապետության ակադեմիայի գիտական և գիտակազմակերպական գործունեության գլխավոր նպատակն էր ժողովրդական տնտեսության զարգացման տասնմեկերորդ հնգամյակի առաջին տարվա պլանից և հետագա հեռանկարներից բխող խնդիրների իրագործումը։ Գիտությունների ակադեմիայի գիտական հիմնարկների և մյուս ստորաբաժանումների կոլեկտիվների աշխատանքի մակարդակի հետագա բարձրացման համար չափազանց կարևոր նշանակություն ունեցան ՍՄԿԿ XXVI համագումարի և Հայաստանի կոմկուսի XXVII համագումարի որոշումներում, կուսակցության և կառավարության որոշումներում բովանդակվող դրույթներն ու հետևությունները։ Ելնելով գիտության առջև դրված այդ կարևորագույն խնդիրներից, ակադեմիայի կազմակերպությունները մշակեցին գիտահետազոտական աշխատանքների պլաններ, ճշգրտեցին իրենց հետազոտությունների հիմնական ուղղությունները։ Ժողովրդական տնտեսության հետագա զարգացման շահերը պահանջում են գիտական մշակումների բարձր մակարդակ և որակ, դրանց ներդրման արագացում։ Եվ պետք է ասել, որ այդ ուղղությամբ զգալի քայլեր են արվել։

Վ. Հ. Համբարձումյանը խոսեց նաև հասարակական գիտությունների ինստիտուտների գործունեության մասին։ Նշելով պատմության, արևելագիտության, հնագիտության ու ազգագրության, գիտական ինֆորմացիայի, տնտեսագիտության ինստիտուտների գիտական կոլեկտիվների ստեղծած հետաքրքրական աշխատությունները, նա մասնավորապես կանգ առավ այն խնդիրների վրա, որ տնտեսագետները լուծում են պլանավորման ու կանխատեսման բնագավառում։

ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակի կապակցությամբ էլ ավելի են ամրապնդվել կապերը միութենական հանրապետությունների և սոցիալիստական երկրների գիտությունների ակադեմիաների հետ։ Մասնավորապես համատեղ աշխատանքներ են կատարվում Վրաստանի, Բելոռուսիայի, ինչպես նաև Բուլղարական Ժողովրդական Հանրապետության ակադեմիաների, Հունգարական Ժողովրդական Հանրապետության և ուրիշ երկրների գիտական կազմակերպությունների հետ։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1981 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս բարտուղար, հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Ա. Գալոյանը։ Զեկուցման շուրջը ծավալվեց մրցքերի փոխանակություն։ Այնուհետև հանձնվեցին ՀՍՍՀ ԳԱ պարգևները։ Գիտական բեղուն գործունեության համար «Մեծարման գիր» պատվոգրեր հանձնվեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Մ. Ք. Ջայլախյանին և Ս. Ա. Համբարձումյանին։ Գիտության զարգացման ասպարեզում խոշոր ավանդ ներդնելու համար «Վաստակագիր» պատվոգրեր ստացան հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Մ. Ղարիբյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ Լ. Մ. Ջանփոլադյանը, Վ. Ս. Նալբանդյանը, Ա. Մ. Գասպարյանը։ Մի մեծ խումբ գիտնականների հանձնվեց «Գովեստագիր» պատվոգիր՝ գիտահետազոտական հաջող գործունեության համար։

Տեղի ունեցան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտների, բաժանմունքների ակադեմիկոս քարտուղարների ընտրությունները։ Փոխպրեզիդենտներ ընտրվեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Ղ. Իսոյանը, Ա. Ռ. Հովհաննիսյանը և Վ. Բ. Ֆանարջյանը։ Ակադեմիկոս քարտուղար ընտրվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Գալոյանը։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովին մասնակցում էին ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Բ. Ե. Սարկիսովը, Ֆ. Տ. Սարգսյանը։

Մ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ